

տոք նասկերը մեր Մատենադարանի, — Հիւրմիւլ, Չամճեան, Ազգեր, Չախչախեան, Բագրատունի, Այվազովսքի, Ալիշան, Նար-Պէյ, Ատրուշան, Հնախօս, Ղազիկեան ևն. : Միխրարի վերջ՝ Միարանուրեան արքանայրութիւնը վարած են Պօլսեցի **Հ. Սեւփանոս Ազունց**, որուն մահուամբ (24 Յնվր. 1824) Պօլսեցի **Հ. Սուքիաս Սամալեան**, որուն մահուամբ (10 Փետր. 1848) Պօլսեցի **Հ. Գեորգ Հիւրմիւլ**, որուն մահուամբ (11 Ապր. 1876) Տրապիզոնցի **Հ. Իգնատիոս Կիւրեղեան** որ 36 տարիէ նետ կը շարունակէ իր նինգ նախորդներուն բազմաբղին գործունէութիւնը : — ԱՒՍՏՒՌՅ թաժինին վերապահելով խօսիլ նամանուն Միարանուրեան Բ. ձիւղին բոլորած բնդուն գործունէութեանը մասին, կը բաւականանանք **Ս. Ղազարու Տպարանին** վրայ ակնարկ մը ձգելով աստանօր : Միխրար ի մասնաօրի մեծ զարկ տուած է նպակական տպագրութեան բարգաւաճումին : Ինչպէս տեսանք յառաջագոյն, մինչև 1789՝ բոլոր միարաններուն գործերը կը ապուէին Վենետիկ քաղաքը՝ Պօսթօլիի և այլ Խոտալացիներու տպարանները : Կառավարական նրամանա՝ բազմերաստ Աբրահայրը կ'աջողի իր վանքին յատուկ Կրեմպերկեան Տաճարն այլ կանգնել



ՎԵՆԵՏԿՈՅ ՄԻԽՐԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԷՋ

ճարն այլ կանգնել 1788 ին : Յաջորդ տարին կը ձեռնարկուի տպագրութեան գործին, յոյս ընծայուելով Ա. գիրքը՝ «Մեկնութիւն երգ երգօցի Սողովմունի» : Սիւրմեղեան, Սամսարեան և Սօրկունճեան Հարք կը ստատարեն անոր կազմակերպութեան, մանաւանդ վերջինս որ ատեն մը Ֆրանսա տպարած և արուեստին տեղեկացած՝ իրենց տպարանը կ'օժտէ նորաձոյց տատերով : 1823

ին նոյն նաստատութիւնը կ'ընդարձակուի ու կը կատարելագործուի ձերմակեան և Քաջունի Հարք ջանքերով : Իսկ զարդիս օժտուած է ան առաջնակարգ մամուլներով, կազմամներով, օտար տատերով ևն. և ատուցմով նանդիսացած երոպական տիպար գործարան մը : 1833 ին Միխրարեանք երբ «Հաւատով խոտովանիմ»ը 24 լեզուներով տպագրեցին ու մատուցին Պէյն. թագաւորին՝ շքանշան ստացան : Իրենց պատկերագարը շքեղ տպագրութիւնք գնաստուած են յոյ՝ ցուցանանդեաներու առթիւ միտալներու արժանանալով . 1851 և 62 (Լօնտօն), 1865 և 67 Բարիզ, 1861 (Ֆիօրենցա), 1872 և 82 (Վենետիկ), 1873 (Վիեննա) : — Բանաօրք Խոտալացի են ամբողջ և նմացած նպերեհի գրաշարութեան : — **Իրենց Մամուլէն** ցարդ յոյս ընծայուած գիրքերուն ևն. ամբողջական ցուցակը նրատարակուած ըլլալով 1910 ին, աւելորդ կը սեպենք զայն ցանկէ կրկին : Փոռնչ մը միայն կապենք շատ արժեքաւոր նատորներք : — Իրենց նրատարակած Ա. բերքը եղած է «Նդանակ Բիւզանդեան» (1800-20), Բ.բ՝ «Գիտակ Բիւզանդեան» «1812-17», իսկ Գ.բ որ իբր կիտամեայ, եռամեայ և ամսեայ՝ անխափան յոյս տեսած է 70 տարիէ նետ, 1843 ին սկսուած «Բազմավեպ»ն է, վերջին տարիներս «Գեղունի»ներու յաւելուածներով : — Ալլարատ, Աշխարհագրութիւն Մ. Խորենացոյ, Աշխարհագրութիւն